բազում մարդասիրութեամբ ընկալաւ զմեզ. զի լուեալ էր զվանաց մերոց. և էր ինքն այր ճգնազգեաց և քաղաքավար յոյժ։ Եւ ի խնդրել մեր ցուցանել մեզ զկոյսն, ասէ. քառասուն օր է յորմէ հետէ անկեալ գնիւր ի մահիճս, և փոքր միւս ևս մեռանէր. և այժմ փոքր մի առողջացաւ. արդ՝ տեսից եթէ հնար է՝ ցուցից ձեզ այսօր։ Եւ յետ պահս ինչ խօսելոյ ընդ մեզ՝ առեալ տարաւ զմեզ ի սենեակ մի, յորում պատրաստեալ էր սեղան, զի ժամ էր ճաշու. էր անդ և այլ ոմն եպիսկոպոս, ընդ որոց բազմեցաք ի սեղան։ Իբրև ուտէաք, էառ եպիսկոպոսն այն խոստովանահայր կուսանացն բաժակ ի ձեռին, և էարբ վասն կենաց գերյարգութեանդ։ Ցետ սեղանոյն գնացեալ եպիսկոպոսին առ կոյսն՝ եկն և ասէ. թողութիւն արարէք, զի տկար է յոյժ կոյսն և ոչ կարէ երևիլ այսօր։ Եկայք այսր ի դառնալ ձերում յաւուր շաբաթու. և յուսամ զի կարէք տեսանել։ Եւ ելեալ մեր անտի հասաք ի վանս կրօնաւորացն հայոց ի մտանել արևուն բազում աշխատանօք ընդ ճանապարհն զառ ի վեր և առապար։ Եւ ել ընդառաջ մեր մեծաւոր վանացն հանդերձ ամենայն կրօնաւորքն. և ի տեսանել զմեզ՝ ասէ. մեծամեծս լուեալ եմ զձէնջ և բազմաց ամաց հետէ ցանկայի տեսանել զոմանս ի ձէնջ. և արդ՝ ելից Աստուած այսօր զփափագ իմ։ Ընկալաւ զմեզ բազում սիրով և եցոյց մեզ բազում մեծարանս առաւել քան զոր ակն ունէաք. և էր ինքն այր ճգնազգեաց՝ պարզամիտ՝ և խոնարհ յոյժ. բազում անգամ տգէտ զանձն խոստովանէր առաջի մեր, և ողբայր յաղագս պակասութեանց կրօնի իւրեանց, մանաւանդ յաղագս տգիտութեան և յաղագս չքաւորութեան։ Տրտնջէին ևս զհայր գրիգորէն իւրեանց որ ի Հռոմ, եթէ ծախեաց ի զուր դրամս բազումս, և պատճառ եղև ցրուելոյ մերոյ։ Այլ և որպէս լուաք յայլոց, յոյժ ճնշէին զնոսա եպիսկոպոսունք իւրեանց, վասն զատանելոյ սոցա ի նոցանէ, զի յառաջագոյն էին ի միասին. և թէպէտ այժմ կամին կրօնաւորքն միանալ ընդ նոսա, բայց նոքա ոչ յանձն առնուն։ Արդ՝ ննջեցաք անդ զայն գիշեր. և յառաւօտու մատուցեալ անդ պատարագ՝ կամէաք ելանել ի վանս կաթուղիկոսին. բայց ոչ եթող մեծաւորն, այլ բռնադատեաց ի ճաշ։ Եւ յետ ճաշուն ելեալ գնացաք, առեալ ընդ մեզ զքօլէճցի Հ. Պետրոսն։ Եւ իբրև հասաք ի վանս անդ բազում աշխատութեամբ՝ որ չինեալ էր ի զագաթ բարձրագոյն լերին, և յանդիման եղաք առաջի կաթուղիկոսին, զարմացաւ յոյժ ընդ անակնկալ գալուստ մեր։ Եւ յետ պատմելոյ մերոյ թէ որպէս եղև մեզ դիպել ի կողմանս յայնոսիկ. և յետ բազում ինչ քաղցրութեամբ խօսելոյ նորա ընդ մեզ, արար մեզ ընթրիս, և կերաք ընդ նմա։ Եւ յետ ընթրեացն իբրև կամեցաք հրաժարիլ, բռնադատեաց կալ մնալ անդ գոնէ մինչև ի վաղիւն. և յոչ կամիլն մեր՝ արձակեաց բազում օրհնութեամբ։ Իջեալ մեր անտի յայնմ երեկոյի ի վանս կրօնաւորացն՝ և ննջեալ անդ դարձեալ զայն գիշեր, յառաւօտու յարուցեալ հրաժարեցաք ի նոցանէ. և մեծաւորն զրեթէ լալով արձակեաց մեզ. զի փափագէր կալ մեզ անդ աւուրս ինչ։ Ի դառնալ մերում չոգաք ի վանս կուսանացն. և տեսաք զի զբաղեալ էր յոյժ եպիսկոպոսն. քանզի յայնմ աւուր հանդերձեալ էր գալ անդ պատրիարգն նոցա։ Բայց քանզի անդ էր կրօնաւոր ոմն յիսուսեան հալէպցի եղբայր կուսին այնորիկ, որ և տեսեալ էր զմեզ յառաջնում աւուր և գիտակ էր խոստման եպիսկոպոսին, գնացեալ խօսեցաւ ընդ եպիսկոպոսին, և տարեալ զմեզ ի խօսարանն՝ ազդ արար գալ կուսին, որոյ եկեալ և կացեալ յետոյ վանդակին՝ ծունր եդ ի տեսանել զմեզ, և սկսաւ մեղմ ձայնիւ խօսիլ արաբացւոց բարբառով։ Եւ ի խնդրել մեր խօսիլ առ մեզ բանս զհոգևոր իրաց, խօսեցաւ բանս սքանչելիս և առածս զարմանալիս որք զսրբութիւն նորա գուշակէին. և որպէս լուաք յեպիսկոպոսէն, բազում յայտնութիւնս և տեսիլս ընդունի յԱստուծոյ, և խօսի բանս մեծամեծս զոր մեծամեծ աստուածաբանից միայն է խօսիլ, ըստ օրինակի կուսին զորոյ զվարսն պատմէր մեզ Գերյարգութիւնդ։ Պատմեցաք նմա վասն վանաց մերոց և վասն Գերյարգութեանդ, այլ և վասն Վ. Հ. Մատթէոսին։ Եւ նորա լուեալ խնդրեաց օրհնութիւն ի Գերյարգութենէդ, և աղօթս ի միաբանութենէ մերմէ, և մասնաւորապէս և Վ. Հ. Մատթէոսէն։ Գրեաց և թուղթ մի առ Գերյարգութիւնդ արաբացւոց բարբառով ի ձեռն գրագրի. զի կացեալ նորա յետոյ վանդակին՝ ասէր, և գրագիրն առ մեզ նստեալ՝ գրէր, զոր առաքեցաք ընդ այսմ թղթի։ Լուաք ևս զի ունէր նա յառաջագոյն ի մարմնի իւրում զվէրս. և աղօթիւք նորա տպաւորեալ էր Աստուած զայնս ի կոյս մի պարզամիտ